ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

26 դեկտեմբերի 2000 թ. N 02/1624
ք. Երևան

ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 62 հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի

Հրամայում եմ՝

Հաստատել «Մաքսային պահեստներում ապրանքների շարժի հաշվառման դրա վերաբերյալ մաքսային մարմիններին տեղեկությունների ներկայացման կարգը» (կցվում է):

Նախարար **Ա. Մանուկյան**

Հաստատում եմ
ՀՀ պետական եկամուտների
նախարար_____ Ա. Մանուկյան
___ _____2000 թ.

Կ Ա Ր Գ

ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը կարգավորում է մաքսային պահեստում մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանության գործունեության լիցենզիա ստացած անձանց (այսուհետև՝ կազմակերպություն) կողմից մաքսային պահեստներում ապրանքների շարժի հաշվառման և մաքսային մարմիններին այդ շարժի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հարցերը:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները մեկնաբանվում են մաքսային օրենսգրքին համապատասխան:

3. Մաքսային պահեստներում կարող են պահպանել միայն «մաքսային պահեստ» ռեժիմով բաց թողնված ապրանքները: Ապրանքները կարող են պահպանվել միայն այն կազմակերպության մաքսային պահեստում, որի մասին կան համապատասխան նշումներ ապրանքները տեղափոխող անձի կողմից մաքսային մարմիններին ներկայացված հայտարարագրերի համապատասխան սյունակում:

4. Կազմակերպությունները պարտավոր են վարել մաքսային պահեստում պահպանվող ապրանքների հաշվառման գրանցամատյաններ (այսուհետև՝ գրանցամատյան) (գրանցամատյանի էջի ձևը կցվում է՝ հավելված 1), որի բոլոր էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո գրանցամատյանը ներկայացվում է կազմակերպության գրանցման վայրի մաքսատուն՝ կնքման և համարակալման: Կնքված և համարակալված գրանցամատյանները խիստ հաշվառման փաստաթղթեր են և հերթական համարներով հաշվառվում են

մաքսատներում: Մաքսային պահեստի յուրաքանչյուր հասցեի համար վարվում է առանձին գրանցամատյան: Գրանցամատյանի կազմի վրա նշվում է գրանցամատյանի հերթական համարը, կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, հարկ վճարողի հաշվառման համարը:

5. Լրացված-ավարտված գրանցամատյանները պահպանվում են կազմակերպության մոտ մինչև գրանցամատյանում կատարված վերջին նշումը կատարվելու օրից սկսած երեք տարին լրանալը և ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն՝ վերջիններիս պահանջով: Գրանցամատյանը լրանալուց-ավարտվելուց հետո կազմակերպությունը սույն կարգին համապատասխան մաքսային մարմիններին, կնքման և համարակալման նպատակով, ներկայացնում է նոր գրանցամատյան: Լրացված ավարտված գրանցամատյանները պահպանվում են կազմակերպության մոտ՝ մինչև գրանցամատյանում ամենավերջին գրանցման օրվանից սկսած 3 տարին լրանալը և ներկայացվում Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին՝ նրանց գրավոր պահանջի դեպքում: Գրանցամատյանի լրացվելուց-ավարտվելուց հետո կազմակերպությունը նոր գրանցամատյան է ներկայացնում մաքսային մարմիններ՝ կնքման և համարակալման:

6. Մինչև ապրանքները «մաքսային պահեստ» ռեժիմով բաց թողնելը դրանք մաքսային ձևակերպումներից հետո տեղավորվում են կազմակերպության կողմից ապրանքների պահպանման համար առանձնացված շինություններում՝ ապրանքները բաց թողող տեսուչը, ապրանքը տեղափոխող անձի և կազմակերպության համապատասխան աշխատակցի հետ միասին ապրանքը ուղեկցում է կազմակերպության համապատասխան շինություն և հայտարարագրում կատարում համապատասխան նշումներ «մաքսային պահեստ» ռեժիմով ապրանքները բաց թողնելու մասին:

7. Ապրանքները տեղավորելուց անմիջապես հետո կազմակերպությունը պարտավոր է համապատասխան նշումներ կատարել գրանցամատյանում: Ապրանքը բաց թողող տեսուչը գրանցամատյանի համապատասխան սյունակում նույնպես կատարում է նշում՝ ապրանքները տեղավորելու մասին և դնում իր անձնական կնիքը:

8. Մաքսային պահեստներում պահպանվող ապրանքների նկատմամբ ցանկացած գործողություն, այդ թվում ապրանքները ապրանքը տեղափոխող անձին հանձնելը, կարող է կատարվել միայն մաքսային մարմինների գրավոր թույլտվությամբ:

9. Առանց մաքսային մարմինների թույլտվության մաքսային պահեստներում պահպանվող ապրանքները այլ անձանց հանձնելը առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Մաքսային ռեժիմի փոփոխության դեպքում, մաքսային ձևակերպումների ավարտից հետո, ապրանքները ըստ համապատասխան փոփոխված ռեժիմի բաց են թողնվում տեսուչի կողմից: Բաց թողնող տեսուչը հայտարարագրում կատարվում է համապատասխան նշում, ապրանքը տեղափոխող անձի և կազմակերպության համապատասխան աշխատակցի ներկայությամբ ապրանքը դուրս է հանվում այդ ապրանքների պահպանման համար նախատեսված տարածքից (շինությունից):

11. Կազմակերպությունը պարտավոր է համապատասխան նշումներ կատարել գրանցամատյանում՝ ապրանքները մաքսային պահեստի տարածքից դուրս հանելու մասին: Ապրանքը բաց թողող տեսուչը գրանցամատյանի համապատասխան սյունակում նույնպես կատարում է նշում՝ ապրանքները բաց թողնելու մասին և դնում իր անձնական կնիքը:

12. Մաքսային հսկողություն իրականացնելու համար կազմակերպությունը, մաքսային պահեստում մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանության գործունեության լիցենզիա ստանալուց հետո, յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա ամսի 10-ը պարտավոր է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն ներկայացնել հաշվետվություն՝ (հավելված 2) հաշվետու ամսվա ընթացքում մաքսային պահեստում պահպանվող ապրանքների շարժի, այդ թվում՝ ապրանքների մուտքի, ելքի, մնացորդների վերաբերյալ:

13. Սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն հաշվետվության և (կամ) գրանցամատյանի չներկայացնելը առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Մաքսային մարմինները՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի կամ համապատասխան մաքսատան պետի հրամանի հիման վրա, կազմակերպության աշխատակիցների մասնակցությամբ կարող են կատարել մաքսային պահեստում պահպանվող ապրանքների գույքագրում՝ կազմելով համապատասխան ակտ:

Հավելված 1

ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ

ԳՐԱՆՑՄԱՆ ԷՋԻ ՁԵՎԸ

Էջ N____

Հ/Հ	Ապրանքը տեղափոխող անձը	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Չ/Մ	Քանակը	«Մաքսային պահեստ» ռեժիմով բացթողնման և պահեստում տեղավորման ամսաթիվը	«Մաքսային պահեստ» ռեժիմով հայտարա-րագրված օրերի քանակը	Մաքսային տեսուչի նշումը՝ այդ թվում հայտարա-րագրի համարը	Մաքսային ռեժիմի փոփոխության և պահեստից ապրանքների ելքի ամսաթիվը	Բաց թողնված ապրանքի քանակը	Մաքսային տեսուչի նշումը պահեստից ապրանքների ելքի մասին, այդ թվում՝ հայտարա-րագրի համարը

Հավելված 2

ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

200 Թ. _____ -Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

մաքսային պահեստի անվանումը

Հ/Հ	Ապրանքը տեղափոխող անձը	Ապրանքի	Չ/Մ	Քանակը			Ապրանքների բաց թողնման հայտարարագրի մասին տեղեկություններ				
				մուտք	ելք	մնացորդ	«մաքսային պահեստ» ռեժիմով			փոփոխված ռեժիմով	
							համարը	ամսաթիվը	օրերի քանակը	համարը	ամսաթիվը

___ _____ 2000 թ. Կազմակերպության տնօրեն _____ _____

ազգանուն, անուն *ստորագրություն*

Կ.Տ.

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
13 փետրվարի 2001 թ.
Պետական գրանցման թիվ 12401040